

Քաղաքականություն

«Հայաստանը որևէ բան չի կորցրել հայ-թուրքական հարաբերություններում»

հարցազրույց թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանի հետ



- Պարոն Սաֆրաստյան, ըստ Ձեզ, հայկական կողմն ի՞նչ շահեց կամ ի՞նչ կորցրեց ստորագրելով «ճանապարհային քարտեզը»:

- Հայաստանը որևէ բան չի կորցրել հայ-թուրքական հարաբերություններում, իհարկե, սա չի նշանակում, թե ունեցել ենք ինչ-որ շահումներ, սակայն այդ հարաբերություններում տեղի է ունեցել առաջընթաց, որն է «ճանապարհային քարտեզը»:

Կարծում եմ՝ թուրքիայի կողմից «ճանապարհային քարտեզի» ստորագրումը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով, որոնցից առաջինն ԱՄՆ-ի ճնշումն էր թուրքիայի վրա:

Երկրորդ հանգամանքը, որի մասին քիչ է խոսվում, այն կարևոր աշխարհաքաղաքական փոփոխություններն են, որոնք տեղի ունեցան տարածաշրջանում անցած տարվա օգոստոսի ռուս-վրացական պատերազմից հետո: Այդ պատերազմը մեր տարածաշրջանում ստեղծեց նոր ստատուս քվո, ուժերի նոր հարաբերակցություն:

Ռուսաստանը տարածաշրջանում ուժեղացրեց իր դիրքերը, ինչը, իմ կարծիքով, կարևոր դեր ունեցավ թուրքիա-Հայաստան «ճանապարհային քարտեզը» ստորագրելու գործում: Ռուսաստանը շահագրգռված էր հայ-թուրքական սահմանի բացմամբ, քանի որ ցանկանում է ուժեղացնել իր ազդեցությունը նաև Մերձավոր Արևելքում, իսկ դա հնարավոր է, եթե սկսի գործել Հայաստան-թուրքիա երկաթգիծը:

Մինչև օգոստոսյան պատերազմը թուրքիան տարածաշրջանում վարում էր պառակտման քաղաքականություն, որի նպատակն էր ստեղծել Վրաստան-Ադրբեջան առանցքը, և որի հիմքը պիտի կազմերին Բաքու-Ջեյհրան նավթատարը, Բաքու-Երզրում գազատարը և կառուցվելիք Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթգիծը:

Սակայն ռուս-վրացական պատերազմը թուրքիայի ծրագրերը հավասարեցին զրոյի և Վրաստանը դադարեց լինել աշխարհաքաղաքական գործոն, իսկ Ադրբեջանն էլ սկսեց իր քաղաքականությունն ուղղորդել ռուսական քաղաքականությանը:

Փաստորեն, թուրքիան կորցրեց տարածաշրջանում իր դիրքերը և ստիպված եղավ գնալ նոր քայլերի՝ փորձելով տարածաշրջանում վերականգնել իր ազդեցությունը: Թուրքիան նախաձեռնեց կայունության և համագործակցության պլատֆորմը, որը, ի դեպ, իրականացման որևէ հնարավորություն չունի:

Երկրորդ քայլը, որին գնաց թուրքիան՝ Հայաստանի հետ ֆուտբոլային դիվանագիտու-

թյուն սկսելն էր, ինչի արդյունքում ստորագրվեց «ճանապարհային քարտեզը»:

- Դուք դրական եք գնահատում «ճանապարհային քարտեզը» և ասում, թե այն թուրքիայի վրա գործադրված ճնշման արդյունք է: Քաղաքական դաշտում հրնշուռ են ճիշտ հակառակ տեսակետներ, որ «ճանապարհային քարտեզում» կան կետեր, որոնք չեն բխում Հայաստանի շահերից:

- Սկզբունքորեն համաձայն չեմ այդ տեսակետին: Ցավոք, Հայաստանում քննարկումներն ուղղորդվեցին թուրքական մամուլի հրապարակումներով, որոնք իրենց հերթին ուղղորդվում էին թուրքիայի արտգործնախարարության կողմից: Այս



արտահոսքի նպատակը, իմ կարծիքով, թուրք հասարակությանը և Ադրբեջանին հանգրստացնելն էր, քանի որ թուրք հասարակության մեծ մասը կտրուկ դեմ էր «ճանապարհային քարտեզին»:

Մենք ծանոթ չենք «ճանապարհային քարտեզի» բովանդակությանը, սակայն հաստատ գիտենք, որ թուրքիան ստորագրել է մի փաստաթուղթ, որտեղ չկա որևէ նախապայման, մենք դա գիտենք հստակ, իսկ մնացածը, ինչ որ գիտենք, թելադրված է թուրքիայի արտգործնախարարության կողմից:

- Որտեղի՞ց Ձեզ այդ վստահությունը, թե չկան նախապայմաններ, եթե դուք ինքներդ եք նշում, թե «ճանապարհային քարտեզի» բովանդակությունը հրապարակված չէ:

- Հայաստանի ղեկավարների՝ նախագահ Սարգսյանի և արտգործնախարար Նալբանդյանի հայտարարություններին... Նրանք բազմիցս հայտարարել են, որ այնտեղ որևէ նախապայման չկա:

Դա գիտենք նաև ԱՄՆ-ի հստակ հայտարարություններից, երբ Հիլարի Քլինթոնը և Պետդեպարտամենտի ներկայացուցիչ Ռոբերտ Վուդը հայտարարեցին, որ «ճանապարհային քարտեզում» նախապայմաններ չկան: Այս ամենը նշանակում է, որ թուրքիան ստորագրել է մի փաստաթուղթ, որտեղ չկան դարաբաղյան հակամարտության, Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի կասեցման, և Հայաստան-թուրքիա հողային խնդիրներին վերաբերող նախապայմաններ:

- Մի՞թե թուրքիայի վարչապետ Էրդողանի հայտարարությունը, որ մինչև հայկական ուժերը դուրս չգան «գրավյալ» տարածքներից, սահմանը չի բացվի, նախապայման չէ:

- Մենք պետք է հասկանանք թուրքական դիվանագիտության առանձնահատկությունները և հաշվի առնենք այն, ինչ ստորագրված է: Իսկ Էրդողանն այդպիսի քայլեր ձեռնարկում է, քանի որ ցանկանում է նախ՝ ճնշում գործադրել հայ-թուրքական բանակցությունների վրա և երկրորդ՝ նա փորձում է շարունակել բարձր պահել իր կուսակցության և իր վարկանիշը՝ հանդես գալով արմատական հայտարարություններով: Այս համատեքստում չի կարելի մոռանալ նախագահ Գյուլի դիրքորոշումը, որը երբեք չի խոսել նախապայմանների լեզվով:

- Էրդողանի հայտարարությունները կարծես պայցույցն էր այն տեսակետի, որ հայ-թուրքական հարաբերությունները պայմանավորված են հայ-ադրբեջանական հարաբերություններով:

- Թուրքիան ուներ ցանկություն մեկը մյուսով պայմանավորելու, սակայն «ճանապարհային քարտեզը» ցույց տվեց, որ թուրքիան ստիպված է հրաժարվել այդ ցանկությունից, չնայած հակառակի մասին է հայտարարում: Կարծում եմ՝ իրականում դրանք տարբեր գործընթացներ են:

Վերջերս թուրքիայի խորհրդարանի արտաքին գործերի համաժողովի նախագահը հայտարարեց, որ եթե չկա առաջընթաց հայ-ադրբեջանական հարաբերություններում, ապա ինչո՞ւ թուրքիան պետք է սպասի և չկարգավորի իր հարաբերությունները Հայաստանի հետ: Սա պաշտոնական հայտարարություն է այն մասին, որ կապ այս երկու գործընթացների միջև չկա:


- Լևոն Տեր-Պետրոսյանը վերջերս հայտարարեց, թե թուրքիան «խաբեց Հայաստանին»: Համաձայն եք այս տեսակետին:

- Ոչ: Թուրքիան ոչ թե խաբեց Հայաստանին, այլ ստիպված եղավ գնալ այն փաստաթղթի ստորագրմանը, ինչը Հայաստանին չհաջողվեց անել Տեր-Պետրոսյանի ղեկավարման տարիներին: Սակայն սա չի նշանակում, որ թուրքիայի հետ մեր խընդիրները շատ արագ լուծվեցին կամ կլուծվեն: Ոչ, դեռ խնդիրներ կան, և պետք է շարունակել պայքարել, սակայն փաստ է, որ առաջին անգամ թուրքիան ստիպված եղավ ստորագրել մի փաստաթուղթ, որտեղ չկա որևէ խոսք որևէ նախապայմանի մասին: Սա արդեն լուրջ ձեռքբերում է:

Զրուցեց Արփի Մախսուդյանը

ВНИМАНИЕ!

Ваша реклама в газете «Нахичевань-на-Дону»



Уважаемый рекламодатель!

Предлагаем Вам рассмотреть возможность размещения рекламно-информационных материалов на страницах одной из самых интересных общественно-политических газет Дона «Нахичевань-на-Дону».

На протяжении многих лет мы регулярно знакомим наших читателей с политической, экономической и культурной жизнью не только Армении, но и России. Мы уже заняли достойную нишу среди СМИ региона. Наша газета стала популярной не только среди многочисленного армянского населения Дона, но и среди любого русскоязычного читателя.

Стабильный рост тиража повысил интерес рекламодателей. С нами тесно сотрудничают: ООО «ДИС», ООО «Лайнер», страховая группа «Адмирал», ТРЦ «Континенталь», ООО «Ростовский завод плавленых сыров», ООО «Киликия» и многие другие. Это наши постоянные рекламодатели, проверившие эффективность рекламных публикаций в нашей газете.

Необходимо отметить, что цена на рекламу в нашем издании выгодно отличается от цены сходных по тиражу газет.

Мы работаем с каждым клиентом индивидуально и рады обсудить Ваши предложения.

Table with columns: день выхода, тираж, формат, объем, цветность, распространение.

- За полноцветную полосу надбавка - 10%.
- За полосу с программой надбавка - 20%

- 1/1 полоса - 3500 руб.
1/2 полосы - 1700 руб.

Частное объявление коммерческого характера, поздравления с фото - 250 руб., без фото - 150 руб.

Table with rates for different ad sizes: 1/32 (150 руб.), 1/16 (300 руб.), 1/8 (600 руб.), 1/4 (800 руб.), 1/3 (1000 руб.).

СКИДКИ: скидки за количество публикаций: 2-3 раза - 10%, 4-5 раз - 15%, 6-7 раз - 20%, 10 и больше - 25%

Скидки рекламным агентствам 20%.

Скидки считаются последовательно